3851

281.6
Z-24

1922

Ծրագիր - Կանոնագիր

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ

ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱԼԷՊ

1922

ՏՊԱԳՐ. «Ս ՄԱՄՈՒԼ»

ՀԱԼԷՊ

281.6
Հ-24

2010

281.6
Հ-24

52797-ակ

39958-67

ԿԱՆՈՆԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ
Հայ Եկեղեցասիրաց Միութեան
ՀԱԼԷՊԻ

ԱՌԱՋԱԲԱՆ

ԻՆՉՊԷՍ ծանօթ է մեզ ամենուս, ընդհ. պատերազմը հայութեան համար ամենաաղէտալին և կործանարարը եղաւ տնտեսապէս և բարոյապէս։

Հայ ազգն ի հնուց անտի որպէս կրօնական ազգ, իր բարեպաշտական զգացումները քաղաքակիրթ աշխարհի գնահատման արժանացած, վերջի պատերազմի ընթացքին քաղաքական պատահարք, և որ մեծն է, տիեզերքի համար իր արհաւիրքով և իր տեսակին մէջ անանախընթաց աւերներով համայնայինջ պատուհաս մեղած է մարդկային ազգին. հայն ալ ունեցած է իր մեծ եւ դժբախտ բաժինը. այս կրկնակ քայքայմանց վիճակաց մէջ, բարոյական քայքայումն է որ ամենալայնօրէն կը հետաքրքրէ զմեզ և դէպ՝ իրեն կ՚ուղղէ ամէն հայու մտքին, խղճին սլաքը։

Ըստ պատմականին եւ իրականին, հայը իր վէտի և զուարթութեան, տառապանքի և երջանկութեան սեւն ու կարմիրը հագած է միշտ իր կրօնական զգացմանց ապաստարանին մէջ, անոր ապաւէն եղած է միշտ իր ե-

եկեղեցին և Ս. Կրօնքը։ Հայը իր ճակատագիրը հիւսած է իր հաւատքի և ազգային աւանդութեանցը ոսկի օղակներով, հետևաբար, երբ այս երկնարար հարստութիւններէն մերկացաւ, իր գոյն ալ չիջաւ, բարոյականն ալ նսեմացաւ և կեանքն ալ դադրեցաւ։ Ուստի միջոցներ պէտք է խորհիլ բարոյական հայը վերականգնելու իր իսկ եկեղեցիովը, իր սուրբ կրօնքով, ներածելով անոր թըմբրած երակներուն մէջ վսեմ բարոյականի Ս. սերմը, Ս. հաւատքի սերումը։

Այս դժբախտ անհրաժեշտութեանց առջև, դրդեալ ՚ի խղճէ և ՚ի զգացմանց, մենք որպէս հայորդի, պարտ անձին համարեցինք միանալ և միջոցներ խորհիլ, ի չափ սահմանի կարողութեան մերոյ, սատարել մերազնէից այս վերականգնումի միջոցներուն. «Եկեղեցասիրաց Միութիւն» մը կազմելու գաղափարն յղանալով ներկայ Ծրագիր-Կանոնագրին ծնունդ տալով։

Հիմնադիրք Հայ Եկեղեցասիրաց Միութեան (*)

Յովհ. քհնյ. Էթմէքճեան   Բարգէն քհնյ. Յակոբեան
Թադէոս Կոլիկեան   Յակոբ Պասմաճեան   Յովհ. Սէթեան
Միքայէլ Միքայէլեան   Ապտուլլահ Օհանեան

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ա.— Ամէն հայ անհատ, ի բնական կարգի իրաց արդէն իսկ անդամակից է միութեանս իսկական նպատակին և որպէսզի ուղղակի առիթը ունենայ այդ նպատակին իրական արդիւնաւորման, պարտի միութեանս անդամակցի ամսավճարով մը, որուն քանակը ինք կ՚որոշէ. (քառորդ մէճիտէն պակաս չըլլալու պայմանաւ)։

Բ.— Միութեանս կրնայ անդամակցիլ բարոյականը

(*) Նշանակելի է նաեւ մեր սիրեցեալ ընկերոջ Արմենակ Պապիկեանի ջանքերը՝ միութեանս յառաջացման համար։ Ինքը այժմ կը գտնուի Ամերիկա։

վստահելի ամէն 16 տարեկանէն վեր այր մարդ։ Իգական սեռին անդամակցութեան կոչելու սկզբունքը չէ որդեգրած պատշաճագոյն առթի սպասելով։

Գ.— Միութեանս եօթը անհատներէ բաղկացեալ հիմնադիր անհատները, որք տեղւոյս Կրօն. Ժողովոյ կողմանէ, որպէս առժամեայ գործադիր մարմին նշանակուած ըլլալով կանոնագրոյս Քաղ. և Կրօն. ժողովներու կողմանէ վաւերացման թուականէն սկսեալ մինչեւ վեց ամիս պիտի շարունակեն իրենց պաշտօնը և այդ ժամանակամիջոցէն վերջ միութեան ընդհ. ժողովը պիտի ընտրէ Վարչական ժողովը՝ գաղտնի քուէյով. Վարչական ժողովը պիտի բաղկանայ 7 անդամներէ վերընտրելի սկզբունքով և գաղտնի քուէով։

Դ.— Ընդհ. ժողովոյ կը մասնակցին Միութեանս բոլոր անդամակիցք. սակայն 20 տարեկանէն վար անդամները ընդհ. ժողովին ներկայ կը գտնուին ընտրութեանց քուէին չմասնակցելու պայմանաւ. նոյնպէս 20 տարեկանէն վար եղողները Վարչութեան չեն կրնար անդամակցիլ։

Ե.— Միութիւնս համարատու և ենթակայ է ընդ իրաւասութեամբ Կրօն. և Քաղ. Ժողովներու։ Յառաջնոյն ի կրօնականս և ի բարոյականս, իսկ երկրորդին՝ ի նիւթականս և ի հաշուականս. հետևաբար Միութեանս Ընդհ. Ժողովոյն նախագահը ուղղակիօրէն կը նշանակուի Կրօնկ. Ժողովոյ կողմանէ և մինչև Գ.րդ յօդուածին տրամադրած ժամանակամիջոցին լրացումը, ներկայ վարչական ժողովոյ որպէս նախագահ նշանակուած է Արժ. Տ. Բարգէն հայր Յակոբեանը, որ պիտի շարունակէ իր պաշտօնին մէջ։

Զ.— Միութեանս վարչութեան ընտրութիւնք կը կատարուին ըստ Ազգ. Սահմանադրութեան օրինաց տրամադրութեան։ Ընդհ. Ժողովոյ կողմանէ ընտրուած Վարչական ժողովոյ պաշտօնավարութեան շրջանը կը տևէ մէկ տարի. վերընտրելի ըլլալու պայմանաւ։

Է.— Վարչական ժողովը պարտի վեց ամիսը անգամ մը իր գործառնութեան համարատուութիւնը ընել ընդհ. ժողովոյ. որ սա ևս վեց ամիսը մի անգամ պարտաւոր պիտի ըլլայ միութեան բարոյական և հաշուական գործունէութեան տեղեկագիրը ներկայացնել Կրօն. և Բաղ. ժողովներու ի վաւերացումն։

Ը.— Միութիւնս Ս. Եկեղեցւոյ չէնքէն ներս և դուրս և է բարեզարդութեան և բարենորոգման ձեռնարկութեան իրաւասու չէ. առանց նախապէս Տնտեսական Խորհրդոյ հաւանութիւնը ստանալու, ըստ որում այս երկուքը, ըստ ընութեան իրենց կազմին, գործակցական հանգամանքն ունին ի պայծառութիւն և ի բարգաւաճումն Ս. Եկեղեցւոյ և՛ ի տնտեսութիւնս և՛ ի բարոյականս։

Թ.— Միութեանս հասոյթի աղբիւրներն են։ Ա.- Անդամավճար, Բ. Ս. Եկեղեցւոյ մէջ տեսական գանձանակ մը ի կախ դնել Տնտես. Խորհրդոյ կողմանէ ցոյց տրուելիք տեղւոյ մը վրայ. Գ.- Եկեղեցւոյ մէջ պնակի շրջապատելու հետևեալ օրերուն. Ծողակաթի Կիրակին. Ս. Վարդանանցի, Քառ. Մանկանց, Ս. Լուսաւորչաց 3 տօներուն յաջորդող Կիրակիներուն, և ասկէ զատ ի դէպ բացառիկ անհրաժեշտութեանց հանգանակութեան ձեռնարկել Կրօն ժողովոյ կողմանէ արտօնուելով։

Ժ.— Ընդհ. ժողովը տարին 2 անգամ իր բարոյական և նիւթական գործունէութեանց տեղեկագիրն ու հաշուեկշիռն ի տես ժողովրդին պիտի դնէ եկեղեցւոյ շրջաբակին մէջ, վաւերացմամբ Կրօն և Բաղ. ժողովներու. և տարին անգամ մը այդ հաշուին ու տեղեկագրին վաւերացեալ օրինակներէն մին պիտի մատուցուի յոտս Ն. Ս. Օծ. Վեհ. Կաթողիկոսին։

ԺԱ.— Միութիւնս կազմուած պարագային իր բոլոր գոյք, գիրք և դրամ, շարժուն և անշարժ ստացուածքը պիտի փոխանցուի Տնտեսական խորհուրդին։

ԾՐԱԳԻՐ

Միութիւնս իրեն սկզբունք նպատակ ընտրած ունենալով սրբազան նախանձախնդրութիւնը հանդէպ Ս. Եկեղեցւոյ Քրիստոսաւանդ բարոյականին, Առաքելական աւանդութեանց և հայրապետական օրինաց, խոստացուցած է իր ծրագիրը հետևեալ երեք հատուածներու մէջ։

Ա.— Ժամանակի և միջավայրի պահանջից համապատասխան աստիճանաբար զարգացեալ կղեր պատրաստել Հալէպի հայ եկեղեցւոյ համար. միշտ նախապատուութիւն տալով տեղացիին։

Բ.— Նախանձելի աստիճանի բարձրացնել Հայ եկեղեցւոյ երաժշտութիւնը. Դպրաց դաս կազմելով և ասոր յարակից միջոցներով։

Գ.— Յամենայնի համակերպութիւն ուխտելով հանդէպ Ազգ. Առաջնորդարանի, Կրօն. և Վարչական սահմանադրական կազմերու որոշմանց և կարգադրութեանց հզօրագոյն դրշմել Ս. Տաճարին վեհութիւնն ու պատկառանքն և ժամերգութեանց և աղօթից վսեմութիւնը հայ քրիստոնէին սրտին, մտքին և բովանդակ էութեանը մէջ։

Ի դիմաց Հ. Ե. Միութեան Վարչութեան

Բ. Ատենապետ Ա. Ատենապետ Նախագահ

Յակ. Պասմաճեան Յովհ. Սեթեան Բարգէն քհ. Յակոբեան

Անդամ Գանձապահ Ատենադպիր

Յ.քհ. Եթմէքճեան Միք. Միքայէլեան Ապտուլլահ Օհանեան

Անդամ Թադէոս Կոկիկեան

3831

Կրօն. ժողովս իր 1922 Յուլ. 29 եւ ԺԹ. նիստին գոհունակութեամբ արձանագրեց Եկեղեցասիրաց Միութեան սոյն Ծրագիր-Կանոնագիրը (ԺԱ. յօդուածէ բաղկացեալ) եւ վաւերացնելով հանդերձ զայն ջերմապէս կը փափաքի որ Գաւ. Քաղ. ժողովը ի պաշտօնէ հաստատելով յիշեալ միութիւնը, քաջալերէ հանդիսանայ անոր բարգաւաճման:

Ի դիմաց Կրօն. Ժողովոյ Հալէպու

Ա. դպիր — Ա. պետ — Նախագահ

Յով. քհ. Էթմէքճեան — *Մ. քհ. Մուրատեան* — *Յր. քհ. Նայեան*

Անդամ՝ *Բարգէն քհ. Յակոբեան*

Ազգ. Քաղաքական Ժողովոյ ԻԸ. նիստին եւ 25 Օգ. 922 ին որոշմամբ վաւերացուցած է սոյն Ծրագիր-Կանոնագիրը՝ ի գործադրութիւն: Հալէպ, 922 Օգ. 29

Բ. Ա-դպիր — *Ա. պետ* — *Նախագահ*

Ս.Գ. Պապիկեան — *Գ. Մարլեան* — *Յրթ. քհ. Նայեան*

«Եկեղեցասիրաց Միութեան» Ծրագիր-Կանոնագիրը կարդալով հաւանեցանք եւ օրհնեցինք նպատակը, որ է պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ նիւթապէս եւ բարոյապէս, ուստի հաստատելով կը մաղթենք որ ո՛չ թէ անուանապէս այլ իրապէս օգտակար հանդիսանայ ի փառս Ած.ոյ:

1922 Սեպ. 17 — ՍԱՀԱԿ Բ. ԿԹ. ԿԻԼԻԿԻՈՅ

Ի Զահլէ

ՀՀ Ազգային գրադարան
NL0030968

3731